# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետ համայնք (0235)63355, (0235)63311, mrgavet0@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15 դեկտեմբերի 2020թվականի N 30**

ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 10-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով ավագանին որոշում է**

Հաստատել Մրգավետ համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 10-րդ արտահերթ նիստի օրակարգը

1.Մրգավետ համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային հիմնարկների աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերի հաստատման մասին

2. Մրգավետ համայնքի 2021 թվականի տեղական տուրքերի և վճարներների դրույքաչափերի սահմանման մասին

3. Մրգավետ համայնքի մանկապարտեզի 2021 թվականի վարձավճարների /ծնողական գումարների/ չափերի սահման մասին

4.Ավտոմեքենաների գույքահարկի արտոնություններ տալու մասին

5.Համայնքապետարանի տարեվերջյան գույքագրման արդյունքները հաստատելու մասին

6.2020թվականի համայնքի վարչական բյուջեի եկամտային և ծախսային մասում փոփոխություններ կատարելու մասին

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՐՇԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
4. ԲԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ԴԱԽՉՅԱՆ ՏՈՒԼԱԿ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետ համայնք, հեռ. (0235)63355, mrgavet0@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

15 դեկտեմբերի 2020թվականի 31-Ն

ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Սահմանել Մրգավետ համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային հիմնարկների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը համաձայն թիվ 1-2 հավելվածների

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՐՇԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
4. ԲԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ԴԱԽՈՅԱՆ ՑՈԼԱԿ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԵՅՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված
Մրգավետ համայնքի ավագանու
2020թ. դեկտեմբերի 15-ի N31-Ն որոշման

Մրգավետ համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը՝ 11

| | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 350000 |
| | Համայնքային ծառայության պաշտոններ | | |
| 1 | Աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 1 | 256000 |
| 2 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/ | 1 | 230400 |
| 3 | Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/ | 1 | 170000 |
| | Քաղաքացիական աշխատանք | | |
| 1 | Մշակույթի տան տնօրեն | 1 | 93000 |
| 2 | Գրադարանավարուհի | 1 | 97000 |
| 3 | Գործավար | 1 | 155000 |
| 4 | Համակարգչային օպերատոր | 1 | 170000 |
| | | | |
| | Տեխ. սպասարկման անձնակազմ | | |
| 1 | Համայնքապետարանի հավաքարար | 1 | 90000 |
| 2 | Մշակույթի տան հավաքարար | 1 | 90000 |
| 3 | Պահակ | 1 | 93000 |
| | | | |
| | | | |
| | Ընդամենը | 11 | |

Համայնքի ղեկավար Լ. Աբրահամյան

Հավելված2
Մրգավետ համայնքի ավագանու
2020թ. դեկտեմբերի 15-ի N31-Ն որոշման

Մրգավետ համայնքի մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը՝ 19

| | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 190000 |
| 2 | Հաշվապահ | 0,5 | 90000 |
| 3 | Բուժքույր | 0.5 | 90000 |
| 4 | Դաստիարակ հոգեբան | 1 | 100000 |
| 5 | Դաստիարակ | 0,5 | 90000 |
| 6 | Դաստիարակ | 0,5 | 90000 |
| 7 | Դաստիարակ | 0,5 | 90000 |
| 8 | Դաստիարակ | 0,5 | 93000 |
| 9 | Լրացուցիչ կրթական ծառայության մանկավարժ | 0,5 | 93000 |
| 10 | Երաժշտության դաստիարակ | 0,5 | 93000 |
| 11 | Տնտեսվար | 0,5 | 90000 |
| 12 | Խոհարար | 1 | 95000 |
| 13 | Օժանդակ բանվոր | 0.5 | 93000 |
| 14 | Դաստիարակի օգնական | 1 | 95000 |
| 15 | Դաստիարակի օգնական | 1 | 95000 |
| 16 | Ֆիզիկական կուլտուրայի հրահանգիչ | 0,5 | 90000 |
| 17 | Գիշերային պահակ | 1 | 93000 |
| 18 | Դռնապան | 0,5 | 90000 |
| 19 | Լվացքատան աշխատող | 0,5 | 93000 |
| | Ընդամենը՝ 19 | | |

Համայնքի ղեկավար Լ. Աբրահամյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետ համայնք (0235)63355, (0235)63311, mrgavet0@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

15 դեկտեմբերի 2020 թվականի N 32-Ն

## ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Սահմանել Մրգավետ համայնքի 2021 թվականի տեղական տուրքերի և վճարնների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՐՇԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
4. ԲԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ԴԱՆՈՅԱՆ ՑՈԼԱԿ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԵՅՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված
Մրգավետ համայնքի ավագանու
2020թ. դեկտեմբերի 15-ի N32-Ն որոշման

ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետ համայնքում 2021թվականի տեղականտուրքերի տեսակները և դրույքաչափերը

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ,

բ. սույն կետի 1- ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված շենքերի և շինությունների համար՝- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000/ երեսուն հազար/ դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000/հիսուն հազար/ դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000/հիսուն հազար/ դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝100000/ հարյուր հազար / դրամ,

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 /երեք հազար / դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000/ հինգ հազար/դրամ,

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն

ընդլայնող այլ կառույցների (այդ թվում` ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն` 3000 / երեք հազար/դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում` ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն կետի 1 – ին ենթակետի սահմանված նորմերը և դրույքաչափերը` շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում` ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն կետի 1- ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը,

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար` 5000/հինգ հազար / դրամ,

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար` օրացուցային տարվա համար` 200000/ երկու հարյուր հազար /դրամ,

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար` օրացուցային տարվա համար` 60000/ վաթսուն հազար/դրամ,

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար` օրացուցային տարվա համար` 50000/հիսուն հազար / դրամ,

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար`

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար` յուրաքանչյուր եռամսյակի համար`

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 6000/վեց հազար/ դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 11000/տասնմեկ հազար/ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14000/տասնչորս հազար/դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22000/քսաներկու հազար/դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26000/քսանվեց հազար/ դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 60000/վաթսուն հազար/դրամ,

բ. օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000/վեց հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000/տասնմեկ հազար/րամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14000/տասնչորս հազար/դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝22000/քսաներկու հազար/դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26000/քսանվեց հազար/ դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 60000/վաթսուն հազար/դրամ,

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350/ երեք հարյուր հիսուն /դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար,

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 50000/հիսուն հազար /դրամ,
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 100000/հարյուր հազար/դրամ,
գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 400000/չորս հարյուր հազար /դրամ,

դ. խաղատների համար՝1000000/մեկ միլիոն/դրամ,
ե. շահումով խաղերի համար՝ 500000/հինգ հարյուր հազար/դրամ,
զ. վիճակախաղերի համար՝150000/հարյուրհիթսուն հազար/դրամ,

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000/հինգ հազար /դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000/ վեց հազար /դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000/տասներկու հազար /դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16000/տասնվեց հազար/դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 22000/ քսաներկու հազար /դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50000/հիսուն հազար / դրամ,

բ.ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000/ հազար /դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 / երկու հազար /դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000/ երեք հազար / ՀՀդրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000/ վեց հազար/դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000/ տաս հազար/ դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16000/տասնվեց հազար / դրամ,

11) ավազանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար,յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝2000/երկու հազար / դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500/երեք հազար հինգ հարյուր/ դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ 0/ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500/հազար հինգ հարյուր/դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 375 /երեք հարյուր յոթանասուն հինգ / դրամ,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի՝150 / հարյուր հիսուն / դրամ,

12) Հայաստանի Հանրապետության Մրգավետ համայնքի անվանումը, որպես օրենքով գրանցված ապրանքային նշան,ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000/ հիսուն հազար / դրամ,

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10000 /տաս հազար / դրամ,

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի՝ հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 500000/ հինգ հարյուր հազար /դրամ,

15) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար 100000 / հարյուր հազար / դրամ,

16) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում 20000/ քսան հազար/ դրամ,

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում 200000/ երկու հարյուր հազար / դրամ։

2. Սույնորոշման 1- ին կետով սահմանված դրույքաչափերի համար կիրառել՝ **0.5** գործակիցը։

3. Սահմանել Մրգավետ համայնքի 2021թ տեղական վճարների հետևյալ տեսակները և դրույքաչափերը՝

1.Բնակչի պահանջով սեփականաշնորհված և տնամերձ հողերը չափելու համար, որպես վարձավճարի չափ սահմանել՝ 1000 դրամ

2.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝ 500 դրամ։

3. Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համր՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցմանվճար սահմանել՝5000 դրամ:

4. Աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար յուրաքանչյուր ամիս սահմանել վճար՝

ա/ կենցաղային աղբի համար յուրաքանչյուր բնակչից 100 դրամ

բ/շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և տեղափոխման համար ըստ ծավալի՝ 1խմ համար 500 դրամ

գ/արտադրական և առևտրային օբյեկտների համար՝1քմ համար 5 դրամ

դ/կրթական հիմնարկների՝ /դպրոց, մանկապարտեզ/, 1քմ համար 2 դրամ

5. համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար՝ 5000դրամ

6. համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքչափ սահմանել՝

ա. Կենդանիների հիվանդությունների բուժման,կանխարգելման հարցերով խորհրդատվություն 500 դրամ ,

բ.վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների կանխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում բացառությամբ <<Գյուղատնտեսական կեդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների մանր եղջերավոր անասունների համար 100 դրամ , խոշոր եղջերավոր անասունների համար 200 դրամ .

գ.կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքարի համար՝200 դրամ

դ. ախտահանության 1 քառակուսի մետրի համար 200 դրամ

ե. միջատազերծում ( դեզինսեկցիա )՝1 քառակուսի մետրի համար՝100 դրամ

զ. կրծողների ոչնչացում (դեռատիզացիա) 1 քառակուսի մետրի համար՝200 դրամ

է. Արհեստական սերմնավորման համար՝5000 դրամ

ը. Կենդանու ռւերծում մանր եղջերավոր անասունների համար 1000 դրամ , խոշոր եղջերավոր անասունների համար՝3000 դրամ ,

թ. Կենդանու բուժում յուրաքանչյուր այցելությունը մանր եղջերավոր անասունների համար 1000 դրամ, խոշոր եղջերավոր անասունների համար 2000 դրամ ,

ժ. Կենդանիների նախասպանդային զննում մանր եղջերավոր անասունների համար 1000 դրամ, խոշոր եղջերավոր անասունների համար 2000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետ համայնք հեռ. (0235)63355, (0235)63311, mrgavet0@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2020թվականի N 33

ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ /ԾՆՈՂԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ/ ՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 19-րդ կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Մրգավետ համայնքի մանկապարտեզի 2021 թվականի ծնողական գումար սահմանել 5000 (հինգ հազար) դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՐՇԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
4. ԲԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ԴԱՆՈՅԱՆ ՑՈԼԱԿ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետ համայնք (0235)63355, mrgavet0@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2020թվականի N 34

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ավտոմեքենայի գույքահարկի արտոնություն տալ համայնքի բնակիչներին՝
Հովհաննիսյան Անուշ - վազ -2106 - 8045 դրամ
Հայրապետյան Արմեն- վազ -2107 - 16996 դրամ
Սարուխանյան Ռոբերտ-վազ-21102-119-8048դրամ
Այվազյան Կարապետ –վազ-21-06-21000դրամ

Կողմ -7 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՐՇԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
4. ԲԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ԴԱՆՁՅԱՆ ՅՈՒԼԱԿ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետ համայնք, հեռ. (0235)63355, mrgavet0@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2020թվականի 35

### ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետերի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Մրգավետ համայնքի սեփականության 2020թվականի գույքագրման փաստաթղթերը, համաձայն հանձնաժողովի կողմից կազմված ակտի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՐՇԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
4. ԲԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ՂԱԽՉՅԱՆ ՏՈՒԼԱԿ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԵՅՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետ համայնք (0235)63311, mrgavet0@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2020թվականի N 36-Ն

## 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 3-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. 2020թ. համայնքի բյուջեի եկամտային մասում կատարել հետևյալ փոփոխությունը

ա/ Համայնքի վարչական բյուջեով տարեկան նախատեսված հողի հարկից հանել 2000000 /երկու միլիոն/ դրամ:
բ/ Համայնքի վարչական բյուջեով տարեկան նախատեսված աղբահանության վճարից հանել 1500000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար / դրամ:
գ/ Համայնքի վարչական բյուջեով տարեկան նախատեսված ծնողական գումրից հանել 500000 / հինգ հարյուր հազար / դրամ:
դ/ Համայնքի վարչական բյուջեի եկամտային մասում ավելացնել օրինականացման գումար 500000 /հինգ հարյուր հազար /դրամ:

2. 2020թ. ելնելով անհրաժեշտությունից համայնքի բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները

ա/ 09.01.01.51 /Նախադպ.ուսուցում / գործառնական դասակարգման 4511 /սուբսիդիններ/ հոդվածից 415000 /չորս հարյուր տասնհինգ հազար /դրամ տեղափոխել 06.04.01.52 /արտաքին լուս. ցանց/ գործառնական դասակարգման 4212 /էներգետիկ ծառայ. / հոդվածին:
բ/ 09.01.01.51 /Նախադպ.ուսուցում / գործառնական դասակարգման 4511 /սուբսիդիններ/ հոդվածից 815000 /ութ հարյուր տասնհինգ հազար /դրամ տեղափոխել 04.05.01.58 /մայրուղիների փողոցների վերակառուցում հիմնանորոգում/ գործառնական դասակարգման 4251 /ընթացիկ նորոգում և պահպանում / հոդվածին:
գ/ 01.01.01.51 /կառ.մարմնի պահպանում/ գործառնական դասակարգման 4111 / աշխատավարձ/ հոդվածից 100000 /հարյուր հազար/ դրամ հանել
դ/ 01.01.01.51 /կառ.մարմնի պահպանում/ գործառնական դասակարգման 4214 / կապի ծառայություն/ հոդվածից 50000 /հիսուն հազար/ դրամ հանել

ե/ 01.01.01.51 /կառ.մարմնի պահպանում/ գործառնական դասակարգման 4239 / ընդհանուր բնույթի այլ ծառ./ հոդվածից 50000 /հիսուն հազար/ դրամ հանել

զ/ 01.01.01.51 /կառ.մարմնի պահպանում/ գործառնական դասակարգման 4251 / ընթացիկ նորոգում և պահպանում / հոդվածից 50000 /հիսուն հազար/ դրամ հանել

է/ 09.01.01.51 /նախադպ.ուսուցում / գործառնական դասակարգման 4511 /սուբսիդիններ/ հոդվածից 2570000 /երկլու միլիոն հինգ հարյուր յոթանասուն հազար /դրամ հանել:

ը/ 08.02.05.52 / թատ.ներկայացում/ գործառնական դասակարգման 4239 /ընթ. բնույթի այլ ծառ / հոդվածից 80000 /ութսուն հազար /դրամ հանել:

թ/ 08.02.04.51 /մշակույթ միջոցառումների իրականացում / գործառնական դասակարգման 4111 /աշխատավարձ հոդվախից /90000 /իննսուն հազար / դրամ հանել

ժ/ 01.06.01.60 / գույ.նկ.իր.տեղ.տր / գործառնական դասակարգման 4241 /մասնագիտական ծառայություն/ հոդվածից 50000 /հիսուն հազար / դրամ հանել:

ի/ 01.06.01.60 / գույ.նկ.իր.տեղ.տր / գործառնական դասակարգման 4819 /նվիրատվություն / հոդվածից 100000 /մեկ հարյուր հազար / դրամ հանել:

լ/ 10.07.01.55 /հաս.կազ.աջ / գործառնական դասակարգման 4819 /նվիրատվություն / հոդվածից 100000 /մեկ հարյուր հազար / դրամ հանել:

խ/05.04.01.55/կենդ. և բնապահպանություն/ գործառնական դասակարգման 4239 / ընթ. բնույթի այլ ծառ / հոդվածից 50000 /հիսուն հազար / դրամ հանել:

ծ/10.07.01.54 /սոց .անապահով անձ. աջակցություն / գործառնական դասակարգման 4729 /այլ նպաստներ/ հոդվածից 210000 /երկու հարյուր տասը հազար / դրամ հանել:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

2. ԱՐՇԱԿՅԱՆ ԱՐԱՄ

3. ԱՐՇԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

4. ԲԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ

6. ԴԱԽՉՅԱՆ ՑՈԼԱԿ

7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ